

ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄԸ ԵՐԿՕՐՅԵԿՏ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

Արամ ԹԱՄԱԶՅԱՆ

*Իրավաբանական գիտությունների դոկտոր,
ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ*

Տնտեսական բարդ պայմաններում մեր երկիրը խնդիր ունի մի կողմից տնտեսել պետական միջոցները, մյուս կողմից՝ արդյունավետ պայքար մղել հանցավորության դեմ: Ներկայումս քրեադատավարական գործունեության կազմակերպման և իրականացման մասին նոր մոտեցումները թույլ կտան ներդաշնակեցնել օրենքի և հասարակական կյանքի իրական պահանջների փոխկապակցվածությունը: Քրեական արդարադատության ոլորտում տիրող այժմյան իրավիճակը ստիպում է ՀՀ քրեական դատավարության կազմակերպման ոլորտում կատարել սկզբունքային համապատասխան փոփոխություններ¹: Առաջին հերթին անհրաժեշտ է հրաժարվել այն ձգտումից, համաձայն որի՝ հանցագործություն կատարած բոլոր անձինք անխտիր ենթարկվում են քրեական պատասխանատվության: Դա հանգեցնում է պետության կողմից հատկացված միջոցների փոշիացմանը: Այդ միջոցները օգտագործվում են հիմնականում ոչ թե ավելի ծանր և հասարակության համար ավելի վտանգավոր բարդ քրեական գործերի քննման և լուծման նպատակով, այլ նվազ վտանգավորություն և նշանակություն ունեցող բազմաթիվ հանցագործությունների բացահայտման նպատակով: Պատժի անխուսափելիության սկզբունքը ի վիճակի չէ կանխարգելելու հանցավորության աճը: Այդ իսկ պատճառով դատախազի կողմից ավելի լայն և հիմնավորված հայեցողական լիազորությունների կիրառումը կարող է երկրի քրեական քաղաքականության արդյունավետ գործիք դառնալ:

Օրենքի և հասարակական կյանքի իրական պահանջների փոխկապակցվածության ներդաշնակեցման գործընթացում կարևոր դեր է կատարում քրեական հետապնդման հայեցողականությունը: ՀՀ դատախազության մասին օրենքի 10-րդ հոդվածում նշված է, որ ՀՀ գլխավոր դատախազը որոշում է ՀՀ դատախազության սահմանադրական լիազորությունների իրականացման քաղաքականությունը: Ցանկացած քաղաքականության ներհատուկ է որոշակի հայեցողություն, ուստի կարծում ենք, որ օրենսդիրն այս նորմով փաստացի ճանաչել է դատախազության լիազորությունների իրականացման ոլորտում հայեցողության շրջանակներում քաղաքականություն մշակելու իրավասությունը: Ակնհայտ է, որ դատախազի՝ քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ հայեցողական լիազորությունները պետք է սահմանափակվեն օրենքով նախատեսված պայման-

¹ Հայաստանի Հանրապետության Նախագահի 2010 թ. ապրիլի 26-ի թիվ ՆԿ-58-Ա կարգադրությամբ ստեղծվել է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը նախապատրաստող աշխատանքային խումբ, որի հիմնական խնդիրներից է Նախագահին ներկայացնել ՀՀ քրեական դատավարության օրենսդրության բարեփոխման հայեցակարգը: Ինչպես հայտնի է, այժմ պատրաստ է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը, որի 199-րդ հոդվածում նախատեսված է հայեցողական քրեական հետապնդման ինստիտուտը:

ներով, ՀՀ գլխավոր դատախազի կողմից մշակված քրեական քաղաքականության սկզբունքներով²:

Մինևույն ժամանակ հայեցողական քրեական հետապնդման կիրառումը չպետք է արժեզրկի քրեական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքը: Հնարավորինս պետք է կարողանալ զուգակցել վերը նշված երկու իրավաչափ շահերի համակցումը:

Սույն հոդվածում կներկայացվի երկօրյեկտ հանցագործությունների դեպքերով տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու հայեցողության խնդիրը:

ՀՀ քրեական օրենսգրքի 7-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հանցանք կատարած յուրաքանչյուր անձ ենթակա է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված պատժի կամ քրեաիրավական այլ ներգործության:

2. Քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելը հնարավոր է միայն Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված հիմքերի և պայմանների առկայության դեպքում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝ (...) 5) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում տուժողը հաշտվել է կասկածյալի կամ մեղադրյալի հետ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածով նախատեսված են այն հանցագործությունները, որոնց վերաբերյալ քրեական գործերը հարուցվում են բացառապես հանցագործությունից տուժած անձի բողոքի առկայության դեպքում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն՝ «դատարանը, դատախազը, ինչպես նաև դատախազի համաձայնությամբ՝ քննիչը կարող են հարուցված քրեական գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 72-րդ, 73-րդ և 74-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում»:

ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածի համաձայն՝ «ոչ մեծ ծանրության հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նա հաշտվել է տուժողի հետ և հատուցել կամ այլ կերպ հարթել է նրան պատճառած վնասը»:

Շարադրված դրույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ տուժողի և հանցանք կատարած անձի հաշտությունն ունի երկակի նշանակություն. այն մի դեպքում անվերապահորեն բացառում է քրեական հետապնդումն ու քրեական վարույթը օրենքով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով, մյուս դեպքում՝ վարույթն իրականացնող մարմնի հայեցողությանն է վերապահում որոշակի կատեգորիայի հանցագործությունների վերաբերյալ գործերով քրեական հետապնդում իրականացնելու և այն շարունակելու հարցը: Այլ կերպ ասած՝ նշված անձանց փոխադարձ կամքը մի դեպքում քրեական հետապնդումը բացառող անվերապահ, մյուս դեպքում՝ հայեցողական հիմք է:

² Տե՛ս «Քրեական դատավարության պարզեցման հիմնախնդիրները»: Գիտագործնական ձեռնարկ / Հեղ. խումբ: Գիտ. խմբ.՝ Ա. Ղամբարյան.-Եր.: «Ատոլիկ գրատուն», 2011, 102 էջ:

Այսինքն՝ քրեական հետապնդումն ու վարույթն անվերապահորեն բացառող հանգամանքներից բացի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված են նաև հանգամանքներ, որոնք որոշակի պայմանների առկայության դեպքում համապատասխան դատավարական սուբյեկտներին հնարավորություն են տալիս որոշակի հայեցողության սահմաններում որոշել քրեական հետապնդում իրականացնելու կամ այն շարունակելու հարցը: Հանցանք կատարած անձի և տուժողի հաշտությունը հստակ ու տարբերակված իրավակարգավորմամբ նախատեսված է քրեական հետապնդման դադարեցման սկզբունքորեն տարբեր երկու՝ անվերապահ և հայեցողական հիմքերի շարքում:

Քրեական հետապնդման հայեցողությունը համապատասխան դատավարական սուբյեկտների՝ անձի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու և այն շարունակելու հարցը լուծելիս նպատակահարմարությամբ առաջնորդվելու հնարավորությունն է: Ինչպես հանրային գործունեության բոլոր ոլորտներում, այնպես էլ քրեական դատավարությունում հայեցողությունը բացարձակ լինել չի կարող: Այն սահմանափակված է այդ հնարավորության իրացման՝ օրենքով նախատեսված օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմաններով: Մեղադրողը քրեադատավարական միջոցների ընտրության հարցում առաջնորդվում է, բնականաբար, հանրային շահով: Մրցակցային քրեական դատավարությունում մեղադրական իշխանությունն օժտված է ինչպես քրեական հետապնդում հարուցելու պարտավորությամբ, այնպես էլ նպատակահարմարությամբ: Նպատակահարմարության սկզբունքը ենթադրում է՝ քրեական հետապնդման հարցը լուծելիս հաշվի առնել մեղադրյալի անձը, նրա արարքի բնույթը, վնասը, տուժողին և գործի ընթացքում շահագրգռված այլ անձանց վերաբերող նկատառումները, ինչպես նաև քրեական հետապնդման իրականացման հնարավոր սոցիալական, տնտեսական և այլ հետևանքների հետ կապված նկատառումները³: Այլ կերպ ասած՝ հայեցողական քրեական հետապնդումը իրավական չափորոշիչներով որոշվող և փաստարկված նպատակահարմարության հիման վրա քրեական հետապնդման հարուցումը մերժելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու դատախազի հնարավորությունն է⁴: Քրեական հետապնդման հայեցողականությունը ինքնին քրեական արդարադատությունը բեռնաթափելու միջոցներից մեկը լինելուց բացի, այն իրացման պայմանների համատեքստում լուծում է նաև այլ խնդիրներ, այն է՝ հանցանք կատարած անձի հետհանցավոր դրական, իրավահպատակ վարքագծի խթանումը, տուժողի խախտված իրավունքների վերականգնումը և այլն:

ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածի հիման վրա քրեական հետապնդում կարող է չիրականացվել, եթե անձը.

- կատարել է ոչ մեծ ծանրության հանցագործություն,
- հաշտվել է տուժողի հետ,
- հատուցել կամ այլ կերպ հարթել է նրան պատճառված վնասը:

Հանցագործությունների շրջանակը, որոնց կապակցությամբ քրեական հետապնդումը քննարկվող հիմքով կարող է լինել հայեցողական, որոշվում է դրանց՝ ըստ ծանրության աստիճանի օրենսդրական դասակարգմամբ:

³ Տե՛ս Աлександрова А. С., Александрова И. А., Круглов И. В. Назначение уголовного судопроизводства и наказание. Н. Новгород. 2006. С.37.

⁴ Տե՛ս «Քրեական դատավարության պարզեցման հիմնախնդիրները», էջ 94:

ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն՝ ոչ մեծ ծանրության հանցագործություններ են համարվում դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում երկու տարի ժամկետով ազատազրկումը, կամ որոնց համար նախատեսված է ազատազրկման հետ կապ չունեցող պատիժ, ինչպես նաև անգաղութային կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում երեք տարի ժամկետով ազատազրկումը:

Վերը նշված պայմաններից վերջին երկուսի բովանդակությունը բացահայտված է *Աշոտ Բաբայանի* վերաբերյալ գործով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշմամբ, որում մասնավորապես սահմանված է, որ. «Հանցանք կատարած անձի համար հաշտությունը հանցանքի կատարման մեջ իրեն մեղավոր ճանաչելն է, այդ արարքի համար զղջալը, ավստսանք հայտնելը, իսկ տուժողի համար՝ հանցանք կատարած անձին ներելը: Բացի այդ, հաշտությունը ենթադրում է տուժողի և ենթադրյալ հանցագործի կամավոր և փոխադարձ համաձայնություն միմյանց հետ հաշտվելու վերաբերյալ: Այսինքն՝ հաշտությունը պետք է լինի ինչպես գործողություն, այնպես էլ փոխադարձ գործողությունների արդյունք:

Հաշտության կամավոր բնույթը ենթադրում է հաշտվելու վերաբերյալ կողմերի ինքնուրույն և ազատ կամահայտնություն:

Հաշտության փոխադարձ բնույթը նշանակում է, որ կողմերից երկուսն էլ պետք է հայտարարեն հաշտության մասին:

(...) Այլ կերպ՝ հաշտությունը երկու կողմերի փոխադարձ կամահայտնությունն է, այն երբեք չի կարող կրել միակողմանի բնույթ, և եթե տուժողը ցանկություն է հայտնում հաշտվելու, իսկ հանցանք կատարած անձը դրա դեմ առարկում է, կամ հակառակը, ապա հաշտության հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու իրավական հիմքը բացակայում է: Սույն կերպ, հաշտությունը կամավոր և փոխադարձ չի կարող համարվել, հետևաբար՝ այդ հիմքով քրեական գործի վարույթը չի կարող դադարեցվել, եթե հաշտությունը հետևանք է տուժողի նկատմամբ հանցանք կատարած անձի գործադրած ոչ իրավաչափ ներգործության:

Անդրադառնալով սույն որոշման 16-րդ կետում նշված երրորդ իրավաչափության պայմանին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն մեկնաբանելու համար անհրաժեշտ է պարզել, թե ինչ է նշանակում «պատճառված վնաս»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածի իմաստով տուժող է այն անձը, ում հանցագործությամբ անմիջականորեն պատճառվել է ֆիզիկական, բարոյական կամ գույքային վնաս: Այս իրավական սահմանման լույսի ներքո մեկնաբանելով ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ հաշտության հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու իրավաչափության այս պայմանի իմաստով պատճառված վնասը հանցագործությամբ անմիջականորեն պատճառված ֆիզիկական, գույքային և բարոյական վնասն է:

Հետևաբար, հանցանք կատարած անձը չի կարող ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նա չի հատուցել կամ այլ կերպ չի հարթել տուժողին հանցագործությամբ անմիջականորեն պատճառված ֆիզիկական, գույքային և բարոյական վնասը:

Դրա հետ մեկտեղ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ եթե տուժողն իրեն պատճառված վնասի հատուցման պահանջ չի ներկայացնում, կամ տուժողն ու հանցանք

կատարած անձը համաձայնության են գալիս վնասն ապագայում հատուցելու մասին, կամ տուժողը զիջում է պարտքը, կամ պարզապես չի ցանկանում ստանալ իրեն պատճառված վնասի փոխհատուցում, ապա այդ հանգամանքը չի կարող խոչընդոտել հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվությունից հաշտության հիմքով ազատելուն»⁵: Պատճառված վնասը հարթելու եղանակները սահմանափակ չեն: Դրա հիմնական դրսևորումը հենց պատճառված վնասի հատուցումն է, որը կարող է արտահայտվել վերցված գումարը կամ գույքը վերադարձնելով, վնասված գույքը նորոգելով, այն փոխարինելով և այլն: Պատճառված վնասի այլ կերպ հարթում է համարվում տուժողի ունահարված իրավունքների վերականգնմանն ուղղված իրավաչափ և երրորդ անձանց շահերին վնաս չպատճառող ցանկացած գործողություն, որի արդյունքում հանցագործությունից տուժած անձը բավարար հատուցում է ստանում իր իրավունքների խախտման համար: Պատճառված վնասը հատուցելու կամ այն հարթելու հնարավորությունը, ինչպես նաև յուրաքանչյուր դեպքում դրա եղանակը կախված են պատճառված վնասի բնույթից:

Անձի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու դիտարկվող հայեցողական հիմքի գործադրման վերը քննարկված պայմանների համակցված վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց միաժամանակյա առկայությունը տեսական և գործնական առումներով ոչ միշտ է հնարավոր:

Այսպես, օրենսդրական դասակարգման «ոչ մեծ ծանրության» խմբին պատկանող մի շարք, օրինակ՝ պետական ծառայության, կառավարման կարգի կամ արդարադատության դեմ ուղղված հանցագործությունների օբյեկտ հանդիսացող հասարակական հարաբերությունների սուբյեկտը, որը վնաս է կրում հանցագործության հետևանքով, պետությունն է, որը քրեական գործով տուժող չի ճանաչվում: Նշված կատեգորիային պատկանող որոշ հանցագործություններ երկօբյեկտ են. դրանց հետևանքով, հիմնական օբյեկտից բացի, վնասվում են նաև այնպիսի հասարակական հարաբերություններ, որոնց սուբյեկտը ֆիզիկական կամ իրավաբանական անձն է, ով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածի ուժով ստանում է տուժողի դատավարական կարգավիճակ: Լրացուցիչ օբյեկտի վնասումը կարող է հանդիսանալ ինչպես հիմնական հանցակազմի հատկանիշ, այնպես էլ հանցակազմը որակյալ դարձնող հանգամանք:

Այն դեպքում, երբ հանցագործության հետևանքով վնասված հասարակական հարաբերությունը չունի մասնավոր սուբյեկտ, և համապատասխանաբար չկա քրեական գործով տուժող ճանաչված անձ, հայեցողական քրեական հետապնդման ինստիտուտը հասկանալի պատճառով տուժողի հետ հաշտության հիմքով չի կարող գործադրվել: Տուժողի հետ հաշտության հիմքով անձի նկատմամբ քրեական հետապնդումը չի կարող դադարեցվել նաև երկօբյեկտ հանցագործությունների դեպքում, երբ թեև գործով առկա է տուժող ճանաչված անձ, բայց վերջինս հանցագործության ոչ թե հիմնական, այլ լրացուցիչ օբյեկտ հանդիսացող հասարակական հարաբերությունների սուբյեկտ է: Բանն այն է, որ քննարկվող հանցագործություններն անմիջականորեն և առաջին հերթին վնասում են պետության մասնակցությամբ և այս կամ այն հանրային շահի կապակցությամբ ընթացող հասարակական հարաբերությունները, իսկ մասնավոր անձանց իրավասուբյեկտությամբ և մասնավոր շահին առնչվող հասարակական հարաբերություններն այդ դեպքում վնասվում են հանցակազմի հիմնական օբյեկտ հանդիսացող հասարակական հարաբերության են գալիս վնասն ապագայում հատուցելու մասին, կամ տուժողը զիջում է պարտքը, կամ պարզապես չի ցանկանում ստանալ իրեն պատճառված վնասի փոխհատուցում, ապա այդ հանգամանքը չի կարող խոչընդոտել հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվությունից հաշտության հիմքով ազատելուն»⁵: Պատճառված վնասը հարթելու եղանակները սահմանափակ չեն: Դրա հիմնական դրսևորումը հենց պատճառված վնասի հատուցումն է, որը կարող է արտահայտվել վերցված գումարը կամ գույքը վերադարձնելով, վնասված գույքը նորոգելով, այն փոխարինելով և այլն: Պատճառված վնասի այլ կերպ հարթում է համարվում տուժողի ունահարված իրավունքների վերականգնմանն ուղղված իրավաչափ և երրորդ անձանց շահերին վնաս չպատճառող ցանկացած գործողություն, որի արդյունքում հանցագործությունից տուժած անձը բավարար հատուցում է ստանում իր իրավունքների խախտման համար: Պատճառված վնասը հատուցելու կամ այն հարթելու հնարավորությունը, ինչպես նաև յուրաքանչյուր դեպքում դրա եղանակը կախված են պատճառված վնասի բնույթից:

⁵ Տե՛ս Աշոտ Սիմոնի Բաբայանի վերաբերյալ ԵԱԲԴ/0157/01/10 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թ. հուլիսի 13-ի որոշումը:

րակական հարաբերությունների հետ առկա օբյեկտիվ ու անբաժանելի կապի պատճառով: Այս դեպքում ևս հանցագործությամբ պատճառված ամբողջ վնասի իմաստով տուժող՝ որպես ինքնուրույն դատավարական սուբյեկտ, չկա, իսկ տուժող ճանաչված անձը հանդիսանում է հանցագործությամբ պատճառված ոչ թե ամբողջ վնասի, այլ դրա «լրացուցիչ» կամ «ածանցյալ» մասի կրողը: Հետևաբար, ներկայացված դեպքում ամբողջ հանցագործության և դրա հետևանքով պատճառված ամբողջ վնասի կապակցությամբ հաշտություն կայանալ չի կարող՝ ամբողջ վնասը կրող տուժողի՝ որպես դատավարական սուբյեկտի բացակայության պատճառով: Հանցագործությամբ պատճառված վնասի «ածանցյալ» մասի կրողին չի կարող հատուցվել հանցագործությամբ պատճառված ամբողջ վնասը, և վերջինս չի կարող հաշտվել հանցանք կատարած անձի հետ ու ներել նրան, ընդունել նրա զղջումը ամբողջ հանցագործության համար:

Ավելին, հանցագործության հիմնական օբյեկտի առանձնահատկությամբ պայմանավորված՝ երբեմն դրան պատճառված վնասը օբյեկտիվորեն հնարավոր չէ հատուցել, իսկ առանձին դեպքերում՝ պայմանավորված հանցագործության երկօբյեկտությամբ և օբյեկտների անբաժանելի կապով՝ չի կարող վերականգնվել կամ այլ կերպ հարթվել նաև հանցագործության լրացուցիչ օբյեկտին պատճառված վնասը:

Եվ վերջապես, հանրային շահի երաշխավորման տեսանկյունից ընդունելի չէ այն իրավիճակը, երբ հանցագործության լրացուցիչ օբյեկտ հանդիսացող հասարակական հարաբերության մասնավոր սուբյեկտի կամքը կանխորոշում է այն հանցագործության վերաբերյալ գործի ելքը, որի հետևանքով առաջին հերթին վնասվել են հանրային շահեր ապահովող հասարակական հարաբերություններ:

Այս մոտեցումն արտահայտված է նաև ՌԴ գերագույն դատարանի պլենումի «Դատարանների կողմից քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերը և կարգը սահմանող օրենսդրության կիրառման վերաբերյալ» 2013 թ. հունիսի 27-ի որոշման մեջ, համաձայն որի՝ «դատարանների կողմից քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը լուծելիս պետք է հաշվի առնվեն գործի կոնկրետ հանգամանքները, ներառյալ հանցավոր ոտնձգության օբյեկտների թիվը և առանձնահատկությունները, դրանց գերակայությունը (...)»:

Այսպիսով, այն դեպքում, երբ ոչ մեծ ծանրության հանցագործության վերաբերյալ գործով տուժող է հանցագործության լրացուցիչ օբյեկտ հանդիսացող հասարակական հարաբերության սուբյեկտը, վերջինիս հետ հաշտության հիմքով հանցանք կատարած անձի նկատմամբ քրեական հետապնդումը չի կարող դադարեցվել, քանի որ տուժող ճանաչված անձը չի հանդիսանում հանցագործությամբ պատճառված ամբողջ վնասի կրողը, հետևաբար նա չի կարող.

1) հաշտվել հանցանք կատարած անձի հետ, նրան ներել, ընդունել նրա զղջումը ամբողջ հանցագործության կապակցությամբ,

2) ընդունել վերջինիս կողմից հանցագործությամբ պատճառված ամբողջ վնասի հատուցումը կամ հարթումը, իսկ առանձին դեպքերում, հանցագործության երկու օբյեկտների կապով պայմանավորված, հանցավորը օբյեկտիվորեն հնարավորություն չունի վերականգնելու պատճառված վնասը նաև միայն տուժողին պատճառված մասով,

3) հանցագործությամբ վնասված մասնավոր շահի վերականգնմամբ պայմանավորված՝ կանխորոշել դրանով վնասված և տվյալ պարագայում առավել կարևորվող հասարակական շահի նկատմամբ ոտնձգող հանցագործության վերաբերյալ գործի ելքը:

ДИСКРЕЦИОННОЕ УГОЛОВНОЕ ПРЕСЛЕДОВАНИЕ ПРИ БИОБЪЕКТНЫХ ПРЕСТУПЛЕНИЯХ

Арам ТАМАЗЯН

*Заместитель Председателя Следственного комитета РА,
доктор юридических наук*

В статье автором был исследован вопрос о правомочности дискреционного уголовного преследования в случае примирения пострадавшего и лица, совершившего преступление при биобъектном преступлении. Анализируя соответствующие юридические нормы, автор пришёл к заключению, что когда в деле о не особо тяжком преступлении пострадавшим является субъект общественного отношения, одновременно являющийся дополнительным объектом преступления, то на основании примирения с последним, уголовное преследование лица, совершившего преступление, не может быть прекращено.

DISCRETIONARY CRIMINAL PROSECUTION OF THE CRIMES WITH DUAL OBJECTS

Aram TAMAZYAN

*Deputy Chairman of the Investigative Committee
of the Republic of Armenia, Doctor of Legal Sciences*

In this article author examined the lawfulness of discretionary criminal prosecution of the crimes with dual objects in case of reconciliation between the victim and the suspect or accused. Analysing the relevant legal provisions the author concluded that when in proceedings with not very grave crimes injured is additional object of crime being at the same time subject of public relations, the criminal prosecution could not be terminated by the ground of reconciliation between the injured and the suspect or accused.

Բանալի բառեր` հետապնդում, հայեցողական, կիրառում, քրեական հետապնդման դադարեցում:
Ключевые слова: преследование, дискреция, примирение, прекращение уголовного преследования.

Key words: prosecution, discretion, concilation, termination of prosecution.